գրանցված 08.08.2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1171382

27 հուլիսի 2011թ

# Հ Ր Ա Մ Ա Ն

№ 126-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N24-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը քաղաքաշինության բնագավառում կառավարման պետական լիազորված մարմնի իրավասություն վերապահելու մասին» թիվ 156-Ն որոշման համաձայն.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի <ՀՀՇՆ II–6.02-2006 <Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր> շինարարական նորմերը հաստատելու մասին> N 24-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) հրամանով հաստատված ՀՀՇՆ II– 6.02- 2006 <Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր> շինարարական նորմերի 6.4.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<6.4.3 Տատանման i-րդ ձևով k-րդ հարկի մաքսիմալ տեղափոխությունը $x_{ki}$ և կից հարկերի $\Delta_{ki}$ շեղվածքների մեծությունները որոշվում են հետևյալ բանաձևերով՝

$$x_{ki} = 0{,}8A\, gk_0\, \eta_{ik}\beta_i\, (T_i /2\pi)^2 \qquad (6)$$

$$\Delta_{ki} = x_{k+1i} - x_{ki}$$ >

Նախարար

Վ. Վարդանյան

27 VII 2011թ

ք. Երևան